

տենադարանի թիւ 45, 47, 65 և այլ երկաթագիր, բոլորգիր և մաս մ'ալ նոտրա-
գիր ձեռագիրներէ (որոնք կարգաւ ՈԽԳ, ՁԳ, ԹՃԼԸ, ՌՃՁ տարիներուն են, այսինքն
1194, 1334, 1489, 1727) զորս ԼԲ ճառընտրի օրինակողները զանց ըրած էին:
Վանքիս հաւաքածոյին մէջ մտած է 1858-1860ին: Ինչպէս կ'ըսէ Հ. Բ. Սարգի-
սեան՝ այս նոր ճառընտրը կը պարունակէ 27-30 ներդրումներ, վկայարանու-
թիւններ, պատմական գրուածներ, թուղթեր, կանոններ, տեսիլներ, ուղեգրութիւններ,
վիճակագրութիւններ՝ որոնց մասին չենք կրնար հոս խօսիլ:

Մարտիրոս եպս.ի Ուղեգրութիւնը թէև չի կրնար բաղդատուիլ Սիմէոն լեհացի
դպրի ուղեգրութեան¹ հետ, սակայն զուրկ չէ շահեկանութենէ զանազան տեսակէտ-
ներով, և մանաւանդ այժմէականութեամբ. թէև և Հ. Բ. Սարգիսեան և Հ. Ն. Ակի-
նեան իրենց յիշատակութեան մէջ աննկատ կը թողուն Սպանիական մասը:

Մարտիրոս եպս.ի ըով կը պակսի գրական — պատմական ոճն և լեզուական
մաքրութիւնը. ինչ որ սակայն նկատելի է իր պարզ ու անսեթեթեթ ձևին մէջ՝ ան-
կեղծութիւնն է, իր կրօնական ըմբռնումը, իր բարեպաշտ ուխտաւորի հաւատքը²,
որ անշուշտ թանկագին ժառանգութիւնն է մեր Հայրերուն, ընդհանուր Եկեղեցւոյ
հետ հաւատքի և սիրոյ միութեան զեղեցիկ դրոշմով:

Կրօնականէն զատ Մարտիրոս եպս.ի Ուղեգրութեան մէջ հետաքրքրական են
իր աւանդած հատուկտոր զանազան հակիրճ տեղեկութիւնները բարբերու և տեղերու
մասին՝ թէև յետիններու կարգին ունենայ անուններու հին և երբեմն աղաւաղ ձևեր:

Մարտիրոս եպս. Երզնկացիէն առաջ բուն Սպանիա զացող ուխտաւորներ Ս.
Յակոբի գերեզմանին՝ եթէ ոչ ամէնէն հին, սակայն հնագոյն ժամանակներէ կը յիշ-
ուին Բագրատունեաց իշխանութեան օրով՝ նախ Ս. Սիմէոն³ սքանչելագործ հայկազն,
ազնուական սերունդէ, ժամանակակից Ս. Գրիգոր Նարեկացւոյն, ինչպէս կը վկայեն
նոյն Ս. Սիմէոնի օրով ապրած և կենսագիր Բենեդիկտեան կրօնաւոր մը — որու
գործը հրատարակած են Բոլլանդանք⁴ ընդարձակ տեղեկութիւններով, — Պարոնիոս⁵,

1. «Հանդէս Ամսօրհայ»ի 1932-1933-1934-1935 տարիներու ընթացքին երևցած:

2. Հայ զէմքեր որոնք ուխտական պանդխտութեամբ կամ գերբնական ուրիշ շարժումներով հեռացած են
Հայ աշխարհէն և թափառած օտարութեան մէջ՝ Երուսաղէմի Տնօրինական սուրբ տեղերը, կամ զԼիւսուր Առա-
քաւններու գերեզմաններն ի Հոռոմ և հուսկ Քոնստանտինուպոլիսի Ս. Յակոբեան ուխտավայրն ի Սպանիա՝ քիչ չեն
որ կ'ենթեմն զիստաւոր աստղերու նման, սկսեալ հին դարերէն. ինչպէս Կլեարիկ և Հիպոլիտիս ամուսիններն ի
Հոռոմ 385 թուին (տես Բզմվզ. 1933, էջ 199). շուրջ նոյն թուականին Պելճիոյ մէջ կը զաննէր Ս. Սերուատիոս
(Servatius = St Servais) հայ ազնուական մը, որ մտերմական յարաբերութիւններ ալ ունեցած է Ս. Աթանա-
սի հետ, մասնակից Սարդիկէի և Ռիմինիի ժողովներուն, մաքառած Արիանոսութեան դէմ, եղած է եպիսկոպոս
Թոնկրը (Tongres) քաղաքին և վախճանած 384 ին Maestrichtի մէջ՝ ուր փոխադրած էր իր աթոռը:

Կ'արժէ յիշել նաև Ս. Մակար հայկազն, ծն. Անտիոք, ուխտաւոր Երուսաղէմի մէջ 1011ին, որ յետոյ
Ֆլանտրայի Կան քաղաքը զացած և վախճանած է 10 Ապրիլ 1012ին, իր կենսագրիչներէն «ծաղիկ Հայաստանի»
կոչուած. (Հմմտ. Չամէնի, Պատմ. Հայոց. Բ. հտ. 858. — Աւգերեան. Լիակ. Վարք. Սրբ. հտ. ԺԲ. էջ 249-251).

Գարձեալ Միլանու մէջ ունինք հրաշագործ սուրբ մը՝ Ս. Արշակ հայկազն, որ նոյն քաղաքին հայրապետ
կ'ըլլայ Զ. Դարուն: Ինչպէս կ'անխառ նոյն քաղաքը պանդխտած և վախճանած հայ եպիսկոպոս մը՝ Աւրեղիոս,
373ին: Ասոնց վրայ կարելի է աւելցնել Ս. Սիմէոն հայկազն հայ եպիսկոպոսը Ֆրանսայի մէջ 591 թուին՝ ինչ-
պէս կը յիշէ Toursի պատմագիր Ս. եպիսկոպոսը՝ Ս. Գրիգոր, են:

3. Որու մասունքներն համբուրիչու բախտն ունեցանք Աւերանէ վերջ (1850 ին) Մանտուա քաղաքի San Be-
nedetto Pó զիւղաքաղաքի 1500 հան շքեղ տաճարին մէջ, 1924 Սեպտ. 27ին, երբ Միւրախութիւնս իր խումբ
մը ներկայացուցիչ Հայրերու և աշակերտներու ձեռքով մասնակցեցաւ՝ հանդիսաւոր մեծ Ուխտագնացութեամբ մը՝
սուրբին մահուան կամ սրբացուցման 900 ամեայ տարեդարձին (տես Բզմվզ. 1924 Հոկտ. էջ 313).

4. Acta Sanctorum Julii. հտ. Զ. էջ 324-337, և Acta Sanctorum Ordinis Sancti Benedicti — Sex-
tum Sæculum ab Ordinis fundatione.

5. Տարեգրութիւնք (Annales) Գ. հտ.